Արձանագրություն N 3

«ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «_25_» «_սեպտեմբերի_» 2019թ.

Ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Հովհաննես Հովհաննիսյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Գուրգեն Կանեցյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ցոլակ Մալաքյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լուսինե Ավետիսյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Նունե Գագինյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Աննա Հարությունյան

1. ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Հ.Հովհաննիսյան)

1.1 ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստը անցկացվել է 2019 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին, «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք.Երևան, Տիգրան-Մեծի 4, 6-րդ հարկ հասցեում:

2. ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին.

(Հ.Հովհաննիսյան)

2.1 ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Հայր և որդի Բեգլարյաններ>> ՍՊԸ-ի կողմից հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

3.ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Հ.Հովհաննիսյան)

3.1 «ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից սեպտեմբերի 17-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջվող էլեկտրոնային հասցեներին, և ներկայացվել է ՄՌԱԳԿ-

ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Հայր և որդի Բեգլարյաններ>> ՍՊԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստացվել է սեպտեմբերի 19-ին, որում նշվել է, որ ընկերությունը, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունեցել է 533,073 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություն վերահսկվող եկամուտների գծով, իսկ հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշիռը բացասական է:

3.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ մասնակցին ուղարկվել է ծանուցում armeps համակարգով՝ հրավերով սահմանված կարգով 3 աշխատանքային օրվա ընթացքում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ կցելով ՊԵԿ-ից ստացված եզրակացության պատճեն:

3.3 Մասնակիցը հաստատել է ծանուցման ստացումը, սակայն սահմանված ժամկետում ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Հ.Հովհաննիսյան)

4.1 Մերժել <<Հայր և որդի Բեգլարյաններ>> ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

4.2 ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

4.3 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)** — Հ.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** — Գ.Կանեցյան

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** — Ց.Մալաքյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** — Լ.Ավետիսյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** — Ն.Գագինյան

Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)** — Ա.Հարությունյան